# Ո՞Վ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ և Ո՞ՐՆ Է ՆՐԱ ԴԵՐԸ ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

## Բանալի համարներ. Հով. 14.16-17,26

*16 Եվ ես Հորը կխնդրեմ, և ձեզ ուրիշ Մխիթարիչ կտա, որպեսզի հավիտյան ձեզ հետ
լինի. 17 ճշմարտության Հոգին, որին աշխարհը չի կարող ընդունել. որովհետև նրան չի
տեսնում և չի ճանաչում. Բայց դուք նրան ճանաչում եք, որովհետև այն ձեզ մոտ է մնում
ու **ձեր մեջ է լինելու**: 26 Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որին Հայրն ուղարկելու է
իմ անունով, նա **ամեն բան** ձեզ կուսուցանի ու կհիշեցնի ձեզ այն ամենը, ինչ ձեզ
ասացի:*

*Հով. 15.26 - 26 Բայց երբոր Մխիթարիչը կգա, որ ես Հօրից կուղարկեմ ձեզ,
ճշմարտութեան Հոգին, որ Հորից է ելնում, **նա կվկայի իմ մասին**:*

*Հով. 16.13 - 13 Սակայն երբ նա՝ ճշմարտության Հոգին, գա, ձեզ կառաջնորդի դեպի
**ամբողջ ճշմարտությունը**, որովհետև ինքն իրենից չի խոսի, այլ կասի, ինչ որ լսի. և
**գալիք բաների** մասին կպատմի ձեզ:*

## I. ՆԱ ԱՄԵՆԱԶՈՐ Է (ԾՆՆԴ. 1.2):
HE IS ALL-POWERFUL

*1 Սկզբումն Աստուած ստեղծեց երկինքը եւ երկիրը: 2 Եւ երկիրն անձեւ ու դատարկ
էր. եւ խավար կար անդունդի վրա. եւ **Աստուծո Հոգին շրջում էր ջրերի վրա**:*

*Սաղ. 33.6 - 6 Տիրոջ խոսքով ստեղծվեց երկինքը, և նրա բերանի հոգով նորա
բոլոր զորքերը:*

### ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՄԵՆԱԶՈՐ Է ԵՎ ՎԵՐԱԾՆՆՈՒՄ Է ՄԵԶ:

*Հով. 3:5-9 - 5 Հիսուսը պատասխանեց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում
քեզ. եթե մեկը ջրից ու Հոգուց չծնվի, նա չի կարող մտնել Աստծու
արքայությունը: 6 Մարմնից ծնվածը մարմին է, իսկ Հոգուց ծնվածը՝ հոգի: 7
Մի՛ զարմացիր, որ քեզ ասացի. "Դուք պետք է վերստին ծնվեք: 8 Քամին
ուր ուզում է, փչում է, և նրա ձայնը լսում ես, բայց չգիտես, թե որտեղի՛ց է
գալիս և ո՛ւր է գնում. այդպես է և Հոգուց ծնված ամեն ոք»: 9 Նիկոդեմոսը
պատասխանեց եւ ասեց նորան. Այդ ինչպե՞ս կարող է լինիլ:*

*Հով. 20.21-22 - 21 Յիսուսը դարձեալ ասեց նորանց. Խաղաղութիւն ձեզ,
ինչպէս իմ Հայրն ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում: 22 Եւ սա
ասելով **փչեց նորանց վրա եւ ասեց. Առէք Սուրբ Հոգին:***

*2 Կոր. 5.17 - 17 Ուրեմն եթէ մէկը Քրիստոսում է՝ նոր ստեղծուած է.
հիները անցան, ահա ամեն բան նոր եղավ:*

## II. ՆԱ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆ Է (1 ԿՈՐՆԹ. 2.10-11): HE IS THE SOURCE OF WISDOM.

*10 Բայց Աստված մեզ իր Հոգու միջոցով հայտնեց. որովհետեւ Հոգին ամեն բաները քննում է, եւ Աստուծոյ խորքն էլ: 11 Որովհետեւ մարդկանցից ո՞վ գիտէ մարդի բաները եթէ ոչ մարդի հոգին, որ նորանում է. այնպէս էլ Աստուծոյ բաներն ոչ ոք չգիտի, եթէ ոչ Աստուծոյ Հոգին:*

*Եփեսացիս 1.17-19 – որպեսզի մեր Տեր Հիսուս Քրիստոսի Աստվածը՝ փառքի Հայրը, իրեն ճանաչելու համար տա ձեզ իմաստության և հայտնության Հոգի, որ ձեր սրտի աչքերը լուսավորի, և ճանաչեք, թե ի՛նչ է նրա կոչման հույսը, ինչքա՛ն է սրբերի մեջ նրա փառավոր ժառանգության առատությունը, և որքա՛ն գերազանց ու մեծ է նրա զորությունը, որով նա զորացնում է մեզ՝ հավատացյալներիս՝ համաձայն իր զորավոր ուժի ներգործության:*

*Եսայի 11.2-3 – Նրա վրա պիտի հանգչի Տիրոջ հոգին, իմաստության և հանճարի հոգին, խորհրդի և զորության հոգին, գիտության և Տիրոջ երկյուղի հոգին: Նրա հաճույքը Տիրոջ երկյուղը կլինի. նա չի դատի ըստ իր աչքերի տեսածի, ոչ էլ պիտի որոշի ըստ իր ականջների լսածի:*

## III. ՆԱ ԱՄԵՆՈՒՐ ՆԵՐԿԱ Է (ՍԱՂՄ. 139.7-10): HE IS EVERYWHERE-PRESENT

*Սաղ. 139.7-10 - 7 Ո՞ւր գնամ քո Հոգուց և քո ներկայությունից ո՞ւր փախչեմ: 8 Եթե վեր ելնեմ երկինք, դու այնտեղ ես, և եթե պառկեմ դժոխքի մեջ, ահա դու այնտեղ ես: 9 Եթե արշալույսի թևերն առնեմ և բնակվեմ ծովի վերջին ծայրերին, 10 Այնտեղ էլ քո ձեռքն է առաջնորդելու ինձ, և քո աջն է բռնելու ինձ:*

## ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ